# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

22 ԱՊՐԻԼԻ 2024թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Արայիկ Աբասյանը, Արմինե Կիրակոսյանը, Մելանյա Համբարյանը, Լուսինե Ղազարյանը, Հակոբ Մելքոնյանը, Վարդան Միրզախանյանը, Սարիբեկ Մկրտչյանը, Կարեն Պետրոսյանը, Արմինե Պողոսյանը, Սեվան Սեփխանյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
Հայկ Հովսեփյան, Արա Նավասարդյան, Նորիկ Տերտերյան, Մարիա Ազատյան, Թեհմինե Անդրիասյան, Շանթ Ավդալյան, Ռուզաննա Թեմուրյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանը**

**Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վարսենիկ Վարդանյանը**

Լսեցին
*ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/ԶԵԿ. ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 62–րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2024 թվականի առաջին նստաշրջանի երրորդ հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-0 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 26-Ա)*

Լսեցին
*ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԵՎ ԻՐԵՆՑ ԴԱՍՂԵԿՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/ԶԵԿ. ՇԱՆԹ ԱՎԴԱԼՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Արաքս համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Արաքս համայնքի թվով 170 շրջանավարտներին և իրենց 13 դասղեկներին դրամական աջակցություն ցուցաբերելու համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի հաստատված բյուջեից հատկացնել 1.980.000 / մեկ միլիոն ինը հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 27-Ա)*

Լսեցին
***ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՇԱՆԹ ԱՎԴԱԼՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Արաքս համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Արաքս համայնքի ենթակայության մանկապարտեզներում (դրանց բացակայության դեպքում նախակրթարաններում) հունիսի 1-ի՝ երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ, ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի հաստատված բյուջեից հատկացնել 990.000 /ինը հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ:
2.Սույնորոշումնուժիմեջէմտնումընդունմանպահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 28-Ա)*

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N174-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՀԱՅԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34–րդ հոդվածի 1–ին մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի «2023 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 174-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 12-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «12) համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների /մսուր-մանկապարտեզի,մանկապարտեզի/ ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

ա.Համայնքի բնակիչ համարվող մանկապարտեզի ծառայությունից օգտվող անձանց համար՝ ութ հազար դրամ

բ.այլ համայնքի բնակիչ համարվող մանկապարտեզի ծառայությունից օգտվող անձանց համար՝ տասնմեկ հազար դրամ

գ.համայնքի բնակիչ համարվող, մսուր-մանկապարտեզի /2-ից մինչև 3 տարեկան հասակը/ ծառայությունից օգտվող անձանց համար՝ տասը հազար դրամ

դ.այլ համայնքի բնակիչ համարվող, մսուր-մանկապարտեզի /2-ից մինչև 3 տարեկան հասակը/ ծառայությունից օգտվող անձանց համար՝ տասնհինգ հազար դրամ

ե.նպաստառու,միակողմանի ծնողազուրկ,հաշմանդամության կարգ ունեցող, մանկապարտեզ հաճախող երկուսից ավել երեխա ունեցող ընտանիքների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ

զ.երկկողմանի ծնողազուրկ, 44 օրյա պատերազմում և դրանից հետո զոհված զինծառայողների երեխաների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների համար՝ անվճար»: 2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի «2023 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 174-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետը շարունակել շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«դ. համայնքի բնակիչ համարվող անձանց բազմաֆունկցիոնալ էքսկավատոր մեքենան /մոդել՝ SOLD BL-385/մեկ ժամ տրամադրելու համար՝ տասը հազար դրամ

ե. այլ համայնքի բնակիչ համարվող անձանց բազմաֆունկցիոնալ էքսկավատոր մեքենան /մոդել՝ SOLD BL-385/ մեկ ժամ տրամադրելու համար՝ տասներկու հազար դրամ

զ.համայնքի բնակիչ համարվող անձանց պտտվող պլատֆորմով անիվավոր էքսկավատոր մեքենան /մոդել՝ JCBJS160W/ մեկ ժամ տրամադրելու համար՝ տասնութ հազար դրամ

է.այլ համայնքի բնակիչ համարվող անձանց պտտվող պլատֆորմով անիվավոր էքսկավատոր մեքենան /մոդել՝ JCBJS160W/ մեկ ժամ տրամադրելու համար՝ քսաներկու հազար դրամ

ը.համայնքի բնակիչ համարվող անձանց բազմաֆունկցիոնալ մինիամբարձիչ Ա մեքենան /մոդել՝ SWL3220/ մեկ ժամ տրամադրելու համար՝ հինգ հազար դրամ

թ.այլ համայնքի բնակիչ համարվող անձանց բազմաֆունկցիոնալ մինիամբարձիչ Ա մեքենան /մոդել՝ SWL3220/ մեկ ժամ տրամադրելու համար՝ վեց հազար դրամ ժ. Կամազ 53605-48(A5) մոդելի մեքենայի մեկ կիլոմետրի համար՝ հազար հինգ հարյուր դրամ»:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 31-Ա)*

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ԹԵՄՈՒՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Արաքս համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համայնքի 2024 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման ընթացքի մասին.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի մասին հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 32-Ա)*

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐՆ «ԱՐԱՔՍԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՀԱՅԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ, 21-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 5-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 05-Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 27-րդ կետի դրույթներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի սեփականություն հանդիսացող գույքերն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արաքսի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը համաձայն հավելված 1-ի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 33-Ա)*

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 176-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՇԱՆԹ ԱՎԴԱԼՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Արաքս համայնքի Ապագա գյուղի «Միլա-Փաթիլ մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպված լինելու հանգամանքը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արաքս համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի, բյուջետային հիմնարկների աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 176-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Որոշման 2-րդ կետով հաստատված N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 30-Ա)*

Լսեցին
***ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱԳԱ ԳՅՈՒՂԻ «ՄԻԼԱ-ՓԱԹԻԼ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՁԵՎՈՎ «ՄԻԼԱ-ՓԱԹԻԼ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՇԱՆԹ ԱՎԴԱԼՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-64-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերակազմավորման ձևով վերակազմակերպել Արաքս համայնքի Ապագա գյուղի «Միլա-Փաթիլ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը և ստեղծել «Միլա-Փաթիլ մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2.Հաստատել «Միլա-Փաթիլ մսուր-մանկապարտեզ»-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
3.Սահմանել որ «Միլա-Փաթիլ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը «Միլա-Փաթիլ մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն է և վերջինիս են անցնում վերակազմավորված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:
4.Ապահովել օրենքով սահմանված կարգով «Միլա-Փաթիլ մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցումը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 29-Ա)*

Լսեցին

***ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԹԵՀՄԻՆԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ, 597-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով «ՎՈԼՖԵՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Մյասնիկ Հովհաննիսյանի 2024թվականի մարտի 4-ի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Որպես նվիրատվություն ընդունել անհատույց սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքին փոխանցվող «ՎՈԼՖԵՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղում գտնվող 04-085-0201-0045

կադաստրային ծածկագրով 2,5հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը:
2. Արաքս համայնքի ղեկավարին՝ ապահովել սահմանված կարգով նվիրատվության պայմանագրերի կնքման գործընթացը, որը ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 34-Ա)*

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՅ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,1 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԹԵՀՄԻՆԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-033-0103-0039 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0,1 հա այլ հողատարածքը օտարել աճուրդային կարգով:
2. Աճուրդային կարգով օտարման մեկնարկային գին սահմանել՝ 04-033-0103-0039 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0,1 հա այլ հողատարածքի համար 1900000 /մեկ միլիոն ինը հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ: Յուրաքանչյուր քայլը մեկնարկային գնի 5%-ի չափով:
3. Մասնակցության վճար սահմանել 10000 /տասը հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, աճուրդն իրականացնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 35-Ա)*

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱՅ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,0854 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Հեկ. ԹԵՀՄԻՆԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով, 76-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրել Արաքս համայնքի սեփականություն հանդիսացող Գայ գյուղում գտնվող բնակավայրերի նշանակության՝ 04-033-0103-0040 կադաստրային ծածկագրով 0,0854 հա այլ հողատարածքը 25 տարի ժամկետով:
2. Մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրման վարձավճարի չափ սահմանել 0,0854 հա-ի համար՝ 25000 /քսանհինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ: Մրցույթի մեկնարկային քայլ սահմանել 1500 Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Մասնակցության վճար սահմանել 10000 Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Համայնքի ղեկավարին՝ հանձնարարել համայնքի սեփականություն հանդիսացող գույքը վարձակալությամբ տրամադրող հանձնաժողովին իրականացնելու սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 36-Ա)*

Ավագանու անդամներ

ՀԱՅՐԱՊԵՏ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐՅԱՄ ՄԱԿԱՐՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՆԱՐԵԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՇԱՀԵՆ ՇԱՀԻՆՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ _____

*Նիստն արձանագրեց՝* Վարսենիկ Վարդանյանը _____